

Հեղինակային հրատարակություն  
Երևան  
2009

Շատա Վարդանյան



Կանաչ Կենդր

պատմվածքներ

ՀՏԴ 891.981-3 Վարդանյան  
ԳՄԴ 84Հ-4  
Վ 301

Վարդանյան Նաոա  
Կանաչ տետր: Պատմվածքներ /Նաոա Վարդանյան.-Եր.:  
Հեղինակային հրատարակություն, 2009, 64 էջ:

ՀՏԴ 891.981-3  
Վարդանյան  
ԳՄԴ 84Հ-4

ISBN 978-9939-53-612-5

... «Դե թող էդ հոտած-փտած գիրքը, դա քեզ ի՞նչ է տալու, մոռացիր գրքերը, ես կողքիդ եմ, նայիր, դատրիկն եմ, չէ... մոռացա՛ր, ու՛ՖՖ»: Քեզ ճնց կնոռանամ, ձստո՛, գիրքը էնպես, քեզնից պաշտպանվելու համար... Բայց զուր ջանք է: Այրելու եմ բոլոր գրքերը: Այրում եմ, ահա...

Դատրիկը պարում է այրվող գրքերի շուրջը, կրակի ցոլքերը խաղում են դեմքին, գրքերը երջանիկ են, իրենք էլ են հոգնել իրենցից, կյանք են ուզում, սեր, ազատություն, նրանք ծափ են տալիս կրակե ձեռքերով, երզում կրակե բերաններով, նվազում կրակե նվազարաններով...

## Գուրգեն Խանջյան

«Գերիրապաշտական օրորոցային դատրիկի համար»

## ՀԱՎԱՆԵԼՈՎ, ԱՆԻՅԵԼՈՎ, ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՍԲ

Նառա Վարդանյանի առաջին գրքում երեք նվիրում-հղում կա, որոնք, անկախ հասցեատերերից, իրենց մասնավորություններում պարագրկում են նրա՝ կայացման ճանապարհ անցնող գրի հատկանշական կողմերը: Մի դեպքում՝ հավանելով, մյուս դեպքում՝ պարզապես նվիրելով, և, վերջապես, անեծքով ու շնորհակալությամբ, երիտասարդ արձակագիրը ի՞ր տեսած իրականությունն է վկայագրում իբրև գրականություն:

Նառայի պատմվածքներում երբեմն հեշտությամբ, երբեմն դժվարությամբ, երբեմն կռահելով կարելի է մատնանշել ազդեցությունների որոշակի դաշտ, բայց նվիրում-հղումների համատեքստում դրանք ավելի շատ նպաստում են նրա ինքնացող գրի փաստարկմանը: Այլ խոսքով՝ ազդեցությունները Նառայի պատմվածքներում, եթե կարելի է այդպես ասել՝ կանոնակարգված են, և ոչ թե պարզ հմայվածություն, այլ՝ ճաշակ ու սեփական գրի հեռանկար են մատնանշում: Ուստի՝ նրա պատմվածքները կարող են ծնվել մեկ այլ գրողի էսսեն հավանելով, կամ նվիրվել ուրիշ հեղինակի վեպի հերոսին, և, վերջապես, կարող են անեծքի ու շնորհակալության համադրումի ստեղծաբանական իրացում լինել:

**Հավանելով** հղումն, ընդհանրապես, ամենամեկնակետայինն է, որովհետև **նվիրում-ը**, **անեծք-**ն ու **շնորհակալություն-ը** դրա ածանցումներն են լոկ: Կարծում եմ, որ Նառայի՝ հղումներով ուղեգծած ընթացքը գրողական ճանապարհի ստեղծագործա-

կան ու հոգեբանական հաղթահարումների ճշգրիտ մեկնություն է, որ բնորոշ է բոլորին: Հավանելով ուրիշի գիրը՝ գայթակղվելով մտնում ես գրականություն, հետո՝ նվիրում-երախտագիտություն ես հայտնում նրան, ում պարտական ես զգում քեզ, իսկ դրան հաջորդում է անեծքի ու շնորհակալության միասնական զգացողությունը, որով գրողական ծանր տառապանքին քո տեղակությունն ես ի ցույց դնում ու նաև գիտակցումը, որ դա քաղցր ցավ է:

Առաջին գիրքը անկեղծության տարածություն է ամենից առաջ, որ միևնույն ժամանակ վկայագրում է գրի կայացման բարդություններն ու դժվարությունները: Գիրն, իր հերթին, կայանալուց հետո անպայման պահպանում է անցած ճանապարհի բոլոր հիշողությունները: Ուստի՝ կարևոր է որսալ գրողական սկզբի հատկականությունների բնույթը, որպեսզի հետագայում կարողանաս թեկուզև մոտավոր կռահել կայացած գրի ենթատեքստերը: Առաջին գիրքն այդ «որսի» պատեհությունն առավել քան ընձեռում է, քանզի նրանում առկա անկեղծության տարածքը հեղինակին խուսանավելու հնարավորություններ գրեթե թույլ չի տալիս, դա կայացած գրի ու գրողի հատկանիշ է:

## Արմենիկ Նիկողոսյան

## ԵՍ՝ ԷԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Նառան որոշել է ամբողջ կյանքում գրո՞ղ լինել», - ասել էր քեռակինս դեռ առողջ ժամանակ: Երևի տխրել էր, որովհետև դպրոցում աշակերտներին գրողների մասին ինքն էր պատմում: Կուզեի նրա հետ նկարված լինել, բայց քանի որ մահվանը մոտ ծերերին ենք համարում, գյուղում ամեն առիթով տատիս հետ եմ նկարվել:

Երբ հասանք գյուղ, քեռակնոջս արդեն սիրուն հագցրած պառկեցրել էին երկրորդ հարկում: Պառավներն, ովքեր բոլոր թոռների հետ իրենք մեջտեղում նստած նկարներ ունեն, եկան շարվեցին սիրուն քեռակնոջս դագաղի մոտ: Հենց տատս ուզում էր ամեն մտնողի հետ բարձր երգ

ասել, քույրերս սաստում էին, ինքն էլ զարմանում էր՝ բա նստել եմ, մի բան չասե՞մ: Հետո քույրերս ասում էին՝ նա է իրենց մոր մահվան պատճառը, որ իրենց մայրը հրեշտակ էր, հայրը ընտանիքի տղամարդ չի եղել: Մայրը մի անգամ փորձել է գնալ գոմում ինքնասպան լինելու, Անուշը լաց է եղել ետևից, քեռակինս վերադարձել է, գրկել աղջկան ու երկար լացել են: Ես ասում եմ՝ երեխեք, լավ, նրանք ծեր են... Էլի եմ ուզում բաներ ասել (քեռակինս վախեցել էր՝ գրող եմ դառնալու):

-Մորս տեղը պիտի պապն ու տատը լինեին, ասում է Անուշն ու փոքր ժամանակվա պես լաց լինում: Հետո էլի ասում է՝ մամաս հղի է եղել, արնահոսել է, տատդ ասել է՝ բարձ դիր մեջքիդ տակ, քնի, կանցնի:

Նոր ցավակցողներ են գալիս՝ տատս աչքերն է ոլորում՝ տեսնի թոռներից կողքին մարդ չկա, բարձր լացի: Քեռիս էլ համաձայն չի տատիս բարձր լացին: Աղջիկները ցավակցողների ներկայությամբ լաց չեն լինում: Էդտեղ միմյանց ատում էին, միակ հրեշտակը քեռակինս էր:

Միշտ տատիցս թքի ու փչացած ատամի հոտ եմ առնում: Ամեն ամառ առավոտները տատս թոռներին հերթով կանգնեցնում էր ու ականջնե-



ընդ ստուգում: Ունը կեղտոտ էր, ցուցամասները թքոտում էր, ականջները մաքրում: (Եթե նա կարդա, կհարցնի՝ էդ էրբե եմ ձեր ականջները մաքրել):

Գյուղի գերեզմանոցն արտերի մեջ է, քեռուս տունը՝ մոտիկ: Մինչև քեռակնոջս յոթը՝ արտի մեջ մի նեղ արահետ է գոյանում. հո քամին պսակները չի շրջել, հո անասուն չի մտել, հողաթումբը չեն տրորել, ու քեռիս ժամը մեկ գնում-գալիս էր: Նա սիրում է իր ուսուցչուհի կնոջը: Ասում էր՝ երբ ուսուցչուհի են ասում, ես գրականության ուսուցչուհի եմ պատկերացնում, մնացածները դասատու են:

Ես ուսուցչուհուց էլ եմ անցնում, տեսնում եմ՝ տատս, մահը, թուքը, արահետն ու քեռակինս գրականություն են:

Երեկոյան լուսավոր սենյակի մեջտեղում մենակ եմ մնում. քեռիս, երեք աղջիկներն ու համեստ մահացած քեռակինս... Ես՝ որպես գրականություն, չեմ խառնվում նրանց ընտանիքի վերջին հանդիպմանն ու հրաժեշտին: Խոսում եմ չորսով՝ հերթով: Քեռակինս մահացած ժպտում է, իրոք ժպտում է: Քեռիս աղջիկներին ասում է՝ ձեր մաման աշխարհի ամենահամեստ

մաման ա, **վաղը** լավ ձամփու կդնեք: Հեկեկում է:

Ես՝ էլի գրականություն, լաց եմ լինում:

**Վաղը** բոլոր աղջիկներով գրկում եմք ծաղիկները, քեռակնոջս հենց ետևից գնում: Ծաղիկների գլուխները չենք պոկում, գցում ցեխի մեջ, որ ետևից եկող թափորը վրայով չանցնի: Անին ասում է՝ մամաս էս ծաղիկների պես էր (Անին էլ է հարցնելու՝ էդպես բան եմ ասել):

Որոշում եմ՝ հենց գնանք տուն՝ մամայիս ու պապայիս հետ կլուսանկարվեմ, տաք խոսքեր կասեմ նրանց:

Մառախուղը դագաղ բռնողներին, մեզ շրջապատել է, միայն քեռակինս, մառախուղի մեջ ժպտալով, շորորվելով, գնում է, հասնում:

Նրա չաղլիկ-ծեր մայրը հողամասը փոցխելիս թփի մեջ թաքնված մեն-մի մանուշակ էր տեսել, քաղել, խոնավ թղթի մեջ փաթաթել ու հևհև գնացել հիվանդ աղջկա մահձակալի կողքին կանգնել, կեսլաց-կեսծիծաղով, ձեռքերը դողդողալով՝ վերջին գարունը նրա ափերի մեջ էր դրել:

Գայուշն ասում է. «Մաման մահվան նախորդ օրը երկար խոսել է հետներս, ասել է՝ Նառան գրող կդառնա»:

Պիտի Անիից ձշտեմ՝ քեռակինս հաստամտ

էդպէս բան է ասել...

Հետո սեղանին դրված բջջայինը, պայուսակը, ժամանակակից իրերը չկարողացան նրա հետ առնչություն ունենալ, մահը հեռացրել էր նրան իմ ժամանակից: Իրերի անտերությունը մահվանն ինձ էր մոտեցրել: Քեռակինս գնացել-հավասարվել էր հազար տարվա մեռելներին:

*Էսսե՝ Աննա Դավթյանի*

*« Հետոյի գրություն »-ը հավանելով*

լուսինը թփերի մեջ լուսինը թփերի մեջ լուսինը թփերի մեջ

## ՏԱՐԻՆ ՄԵԿ

## ԼՈՒՍԻՆՆԸ ԹՓԵՐԻ ՄԵՋ

Վազում էի Գևորգի մոտ: Միայն նրան կարող էի ասել, որ Շողերին քիթմտության վրա անհոգ մեռած թողել, եկել եմ իր մոտ օգնություն խնդրելու: Շողերի տղային պարտքերի դիմաց այրել էին մոր աչքի առաջ. պետությունն էլ հողերը խնայելու, ամբողջ Հայաստանը գերեզման չսարքելու համար հիմա դիակիզարաններ էր կառուցում: Հեռուստացույցի ձայնը դիտմամբ բարձր միացրել եմ, որ կարծեն՝ Շողերն անհոգ սերիալ է նայում:

Տաքսու վարորդի վրա գռռացի. «Զգույշ, ագռավ տրորեցիք»: Վարորդը, սիգարետը շուրթի անկյունում պտտելով, ասաց. «Քուր ջան, շատ ռոմանտիկ ես, տղամարդու սև տրուսիկ ա, խի՞ ես խառնվել իրար»:

Գևորգի խոսելը. «Տիեզերքը աղմկում է, նրա հոգոցները մեզ են հասնում, հո չենք թողնելու՝ հողը կորչի, ծերանա, հասկացիր՝ հողին պետք է ազատենք չարչարանքներից, փրկենք դիակներից»:

Ամբողջ խոսակցության ընթացքում եղունգներս կրծում էի. կարմիր ներկ էի քսել կամ արդեն արյունս էր...

Ձեռքերս բարձրացրի, թևերիս ներկ չէի քսել. արյունս էր:

Ափերն աչքերիս մոտ թափ տալով՝ ասում էր. «Այս ամենակարևորն ես մոռանում՝ հողը Աստծո սերմն է, մեռած բջիջները նրա ինչի՞ն են պետք»:

Շողերը զուգարանից դուրս գալիս հետույքը մաքրած թուղթը հետն էր վերցնում, միջանցքում սիրուն ծալում, գրպանն էր դնում, ո՞նց հնարավոր է՝ նրա վախը մեռած բջիջ համարեն: Իմ խելք Գևորգը անկարողությունից էշություններ էր դուրս տալիս: Գևորգս իսկապես խելոք է. մեր հանդիպման օրերին սոխ չէր ուտում, գիտեր, որ համբուրվելու ենք, իսկ ես ասում եմ սոխի հոտը:

«Աղմուկը հողի ձայներն են, տիեզերքը վախենում է, նայիր վերև, բա քո կարծիքով ամբողջ աշխարհում աղետներն ինչից են: Դե արի, արի իմ սիրուն աղջիկ, արի աղոթենք լուսնին, ափերդ բաց արա, ձեռքերդ վեր պարզիր, գայլի նման ոռնա: Տես լուսինն ինչ սիրուն է, ոնց որ տուտուզիկդ լինի թփերի մեջ չիշիկ անելիս»:

Նայել է:

Ձէ... էէ... ու մտքումս ոտքերս գետնին խփեցի: Իմ Շողեր մորքուրը ծերությունից շերտ-շերտ իրար վրա հավաքված մաշկով աջ կուրծքը հա-

նում էր, գցում կրծկալի վրա, չոր պտուկը ցուցամատի ու միջնամատի արանքում դնում, երևակայելով կերակրում էր արդեն մեռած տղային, ով, հնարավոր է, Շողերի համար նոր էր ծնվել... Ոնց կլինի՝ նրա սերը մեռած բջիջ համարվի: Եթե կարողանայի այս էլ ասել, գուցե իրոք օգներ՝ փաստաթղթերը ձևակերպեինք, կարգին հուղարկավորեինք (հողն ուղարկեինք) Շողերին:

«Դե հերիք է բարակ մատներդ կոտրատես, արի հիմա էլ էն բարձր սարին աղոթենք»:

Ձախ շրջվեց: Չտեսավ զարմանքս: Ձեռքերը վեր պարզեց ու սկսեց գայլի նման ոռնալ: Ես լուսնի կողմն էի նայում: Արտասովոր հանգիստ եմ. կարծես Շողերն ու նրա մահը երբեք էլ չեն եղել, ոչ ոք բացի Գևորգից չգիտի, որ Շողերին բերանի վրա մեռած թողել, փախել եմ իր տանից: Պատահական, վերացական, հատ-հատ ասված նրա խոսքերն այլևս ոչինչ չէին նշանակում, իր գրածի պես ուզում էի քացով հասցնել հետույքին: Ուր էր, թե կարողանայի արհամարհել նրա մեկիկ-մեկիկ ասված խոսքերը, իր մասին էլ հաստատ մտածում էր. «Ինչ տականքն եմ ես, չէ, ավելի շուտ՝ ինչ խղճուկն եմ ես...»: Գուցե ինքն էլ ուներ սև փայլուն գոտի ու փոքր աղջկան մանկապարտեզից վերադարձնելու հիշողություն:

Հնարավոր է՝ Գևորգը երկուսիս էլ սփոփելու կարիքն ուներ. երկուսիս նույնիսկ վաղաժամ մահը (նրա մահը միշտ էլ ինձ վաղաժամ է թվալու)

չէր փրկի մեր մարմիններն այրելուց... Եթե սա կարողանայինք ասել միմյանց, կասեի՝ արի գոնե Շողերին թաղենք: Ուշադիր նայեցի նրան, ասաց՝ էդպես ուշադիր չեն նայի ծերացող մարդուն: Մենք երկուսով էինք պայքարում իր ձերմակելու դեմ: Նա երիտասարդության, հատկապես Արմենի հետ մրցելու պատճառով է արագ ծերանում: Ջնայած Արմենը ինձ էլ էր խանգարում, խանդում էր. նրա մասին հողվածը համակարգչիս մեջ գցել էր «Գևորգ-1950» վերնագրով: Չեմ ուզում Գևորգս մահանա: Իմ ջահելությամբ նրանից շեղում եմ, գայթակղում եմ մահվանը: Գևորգին ասում եմ՝ տխուր եմ, արդեն երկու օր է՝ մամաս պապաս իրար հետ չեն քնում, ասում է՝ էդպես լինում է, ժամանակ է գալիս, երբ ամուսինները միասին չեն քնում, հազարից մեկ, ամիսը մի անգամ: Նայում է աչքերիս՝ ես քեզ եմ սիրում:

Ջզվում եմ ինձանից, որ նա էլ ամիսը մեկ մեռնակ չի քնում: Գևորգս հիվանդ է, ջերմություն ունի: Ջանգում եմ Օլյային, հարցնում՝ կարելի՞ է գամ Գևորգին տեսնելու, նա էլ՝ եթե դու մեռնակ ես, արի, թե չէ լիքը երեխեք գալիս եմ, Գևորգին խանգարում:

Երեխեքը հյուր են գնացել: Դրանից հետո իմ ընկերներից մեկն անընդհատ ծյոծ Օլյայից էր խոսում, մյուսները ծածուկ կամ կտրուկ շրջվում ու ինձ էին նայում: Չէին հասկանում, որ ես ու Օլյան հարազատների պես սիրում ենք իրար կամ



որ նույնն է՝ նույն մարդուն:

Հիմա, բոլորին արհամարհելով, գնում են նստում Գևորգիս անկողնու կողքին: Օլյան սուրճ է առաջարկում: Հրաժարվում են: Տղան թեյ է առաջարկում: Հրաժարվում են: Կնոջ հետ ռուսերեն են բլբլացնում: Երբեք ռուսերեն բարձր չեն խոսել: Կինն իրենց ընտանեկան լուսանկարներն է ցույց տալիս. նա և Գևորգը թևանցուկ, երիտասարդ են, լողափին: Նրա միակ առավելությունը երիտասարդ Գևորգին տեսնելն էր: Իրենց առաջնեկը՝ Գևորգիս գրկին: Կինն էլի է սուրճ առաջարկում: Համառորեն հրաժարվում են: Այս լուսանկարում նրանք հարս ու փեսայի շորերով են. «Смотри каким он был хорошим женихом»: Սպասում է՝ հաստատեն իր խոսքերը, ասում են՝ հա, շատ եք սազում իրար: Հետո ասում են՝ Օլյա, ինչ սիրուն են ձեռքերդ (իրոք սիրուն են): Նա ժպտում է, շփոթվում, նորից նայում ձեռքերին, սրորում, նորից ժպտում: Հետո հանում է նկարների առանձնացված մի խուրձ, որտեղ Գևորգը տարբեր աղջիկների հետ է: «А что, у вас с Геворгом нет фотографии?»: Լռում են: Չեն ավստում, որ եկել են նրանց տուն: Ընդհակառակը, ուզում են ընդմիջտ այդտեղ մնալ՝ ընտանիքիս՝ Գևորգի, Օլյայի և նրանց որդու կողքին: Գևորգն արթնացավ: Տաբատն էր փնտրում: Օլյան խնդրեց դուրս գամ՝ Գևորգը հագնվի: Միջանցքում վառարանի կողքին մատներս էի այրում.

ախր ես Գևորգի մերկ ոտքերը մերսել եմ, նրա եղունգներն էլ եմ կտրել: Գնում եմ նրանց տանից առանց Գևորգի հետ խոսելու:

Գնում էի իմ ձերմակ պտուկներով մահացած Շողերի մոտ: Գևորգին շատ էի ուզում ասել, որ եթե ինձ փնտրելու լինի, չգնա Շողերենց տուն: Չասացի: Իզուր: Երևի ենթագիտակցորեն ուզեցի՝ ինքն էլ տեսնի փորի վրա մահացած կնոջ զավեշտը: Շողերն ինձ միշտ մի երագի մասին էր պատմում. իբր իրեն փորի վրա են պառկեցնում դագաղի մեջ, ես էլ մտածում էի՝ երևի սեքսում պառավիկիս սիրած դիրքն է եղել:

111-ով հասնում եմ Նար-Դոս փողոց: Պետությունը հզոր բան է: Օրենքն ընդունելուց մեկ ամիս անց արդեն աձյունասափորների, պատվանդանների խանութների փողոց է Նար-Դոսը: Ոչինչ չի վրիպում հայացքիցս: Եթե ես մեռած երեխաներ ունենամ, նրանց ձկույթիս չափ աձյունասափորների մեջ կլցնեն: Տեսա: Փոքր սափոր, փոքր մատ, փոքր երեխա... Վազել...

Ջանգում եմ Գևորգին՝ սեր ջան, երագումս իբր դագաղում ինձ փորի վրա են պառկեցնում: Գևորգը էլի հուսահատ է, ջերմում է՝ իմ երագում էլ մեջքիդ մրջյուններ էին ման գալիս, գուցե իմ երագը քո երագի մեկնաբանությունն է: Խանդեց:

Փախչել գևորգներից...

Կյանքումս կրկնվող անընդհատ վազքը նման

Էր պատմվածքի այն պարբերությանը, որն անընդհատ կարդում էի, և միշտ նույն տեղից միտքս շեղվում էր, վերադառնում էի՝ էջը սկսում էի նորից կարդալ, էլի նույն պարբերությունում՝ նույն միտքը... Երևի բառի ասոցիացիան հեղինակի էներգիայից ուժեղ էր:

Իմ վարձով տան պահարանի դռներն ալիքաձև էին, պահարանի մեջքը հաստ փայտից էր. ուրեմն կողքերը կլինեն ալիքաձև, մնում էր կափարիչի հարցը լուծել: Շունչս կտրվում էր: Երբեք տունս այդքան հեռու չէր եղել: Երթուղայինում մի կին թաթիս խփեց մատներս կրծելու համար: Գուցե իսկապես պետք էր ենթարկվել: Թողնել, այրել: Գուցե սափորի պաղած ընդերքը հասնի հողի խոնավությանը:

Ձէ: Չհուսահատվել էր պետք:

Դրամապանակիս մեջ խելագար Շողերը հետույքը մաքրած գուգարանի թղթերից էր դրել, 100 դրամը հանելիս տեսա, գրած՝ «նարա ջան, իմ լավ նարա. հիլ չանես՝ էրեն ինձ, բալես»: Իմ խեղձ, ես էլ էի մեղքս գալիս:

Դրամապանակիցս կեղտի հոտ էր փչում:

Անիի հեկեկոցը. «Դու երբեք էլ չես իմանա ինչ է նշանակում մեջքը թրջված վերնաշապիկով քայլել: Տասնվեց էլ չէի, երբ Շողերիդ տղեն միջանցքում հենց ինձ տեսնում էր, ետևից մեջքս գրկում էր, ափերով սեղմում խակ պոպոքի չափ կրծքերս: Մեջքս սկզբում տաքանում էր, հետո

չգիտեի՝ ինչի էր թացանում: Մեջքիս ազոավի ծոռածի պես թացով էի տուն հասնում: Զզվում եմ քո պաշտելի բոլոր տղամարդկանցից, զզվում եմ»:

Նրան բռնացրել էի ընկերուհու հետ իմ տանը մերկ նկարվելիս: Երևի անընդհատ Շողերի մասին մտածելս մսխել էր կանխագուշակության իմ բոլոր շնորհները: Լկտիորեն փռվել էին հատակին, պստիկ ափերով գրկել միմյանց գայթակղող մարմնամասերը: Բազմոցների ու սեղանի վրա սև-կարմիր ծաղիկներով ներքնաշորերի թափթփվածությունը անդրադարձված հայելու մեջ էի տեսել: Ապարատն իրենց կույր ընկերուհու ձեռքն էին տվել, նա էլ ձայների ուղղությամբ նկարում էր:

«Նրա շնորհիվ էր, որ իմացա՝ ինչ սիրուն եմ ես, ինչ հոտ ունի մաշկս...»:

Վերջին երեք բառն ասաց դատարկության մեջ: Միայն աստիճաններով իջնող կույր ընկերուհու ձեռքի փայտն էր տկտկում՝ անորոշ, շտապող, մոլորված: Չէի ձանաչում քրոջս: Բայց գրույց էր, դա էլ էր գրույց:

Շատ կարևոր էր չմոլորվելը: Զարմանում էի՝ էսքան վախերը որտեղից եմ հավաքել:

«Գիտե՞ս ինչեր ենք արել էդ տղամարդկանց գլխին. կարձ յուբկաներով մտել ենք մետրո, իբր իրար հետ չենք, մատել իրար դիմաց. նա ձեռքով շոյում էր ոտքերը, ոտքը ոտքին է գցել, գիտեր՝

սիրում եմ իր մերկ բոլիկները, մեր կողքը նստած տղերքն էլ իբր իրար հետ կատակ են անում, հրմշտում են իրար, շորերը քաշում, երկար մայկեքը ծնկներով փաթաթում, որ տնկված անտերները չերևան... հենց մետրոյի դռները ուզում էին փակվել, ես ու Գայուշս ծլկում էինք, լրբի տղերքին էլ մնում էր կնանիքի հոհոցը:

Այ էդպես ու էդքան ատում ենք տղերքին»:

Տեսնում էի, թե աչքերի մեջ ինչպես է ատելությունը տխրություն դառնում: Բերանս չբացած՝ գոռաց. «Պապան ինչ»:

Ձէ, պապայի մասին հեչ չէի ուզի՝ խոսենք, բայց ում մասին էլ որ ասեի, նա մեր հոր անունն անպայման կտար, որովհետև հայրս իմացել էր՝ պատմվածքներ եմ գրում, կանաչ կազմով բարակ տետրի մեջ բանաստեղծություններ էր գրել, չորս անգամ ծալած դրել ասիս մեջ ու ասել. «Սրանք կարող ա քեզ պետք գան: Կարաս օգտագործես հողվածներիդ մեջ (ինքը պատմվածքներին հողված էր ասում): Բառերը սովորական են, դու, եթե ուզես, փոխի»:

Այդ պահին էնքան ուզեցի հորս վզովն ընկնել, փաթաթվել նրան: Երևի ավելի տխուր բան չկա, քան հորդ գրած բանաստեղծությունները չհավանելը, կանաչ տետրի գոյությունը թաքցնելը և միլիարդավոր մարդկանց ողբերգությանը շատ նման նրա ողբերգությունը տեսնելը:

Անին մի քիչ լռեց: «Մաման հենց տանն ա լի-

նում, հորդ լռությունը դառնում ա իմաստուն, կարևոր, ասելիքային, բայց հենց մի փոքր բացակայում ա, լռությունը խեղձանում, աչքերը փոքրանում են, իրենից էլ մի քանի հատ են սենյակում ման գալիս: Դու չես էլ նկատել, որ հիվանդանոցում մամային վիրահատարան տանելիս, սայլակը հրելիս պապայի մեջքը թրջվել էր. կամ լացելուց էր, կամ կնոջ կարոտից... ինչ է՝ վախենում՞ էր...»:

Վախենում էր:

Ես հասկանում էի՝ Անին Գայանեին է պաշտպանում: Չգիտեր, բայց երևի գուշակում էր, որ երկու տարի հետո Գայանեն երեխա է ունենալու, ինքը երկչոտ գնալու է փոքրիկի սենյակ, չորս օրական փոքրիկի հետ խոսելու է, կշտամբելու, ասելու է երեխային, փորձելու է փոքր ոտնաթաթիկները ջարդի, առանձնացնի սրունքներից, այդ պահին Գայանեն, բինտ ու բամբակ ձեռքին, մտնելու է սենյակ, իրեն խնդրելու է սենյակից մի բոպետով դուրս գալ, որ մշակի ծննդաբերությունից մնացած վերքերը: Անին խնդրում է՝ ինքն անի, կհամբուրի, կթքոտի, կշոյի, կլավացնի բոլոր վերքերը, ինչ ուզի, կանի, բայց մտնելու է Գայանեի ամուսինն ու Անիին վռնդելու: Ինչ է, Գայանե, քեզ անպայման տղամարդու մարմին էր պետք, որ ձանկրելով, հրելով, քերելով՝ որովայնդ լցնես, ինչու՞ լքեցիր Անիիս, իմ պուձուր Անիին, կարմիր շրջագգեստով, փոքր գարշոկին նստած Անիիս:

Եթե քույրս լաց լիներ, ես էլ կլացեի: Եթե նայեր ինձ, կփաթաթվեի նրան, բայց առանց աչքերիս մեջ նայելու դուրս եկավ տանից: Դուռն այնպես շրխկաց, ինձ թվաց դուռն էլ նրան նախատեց: Մոտեցա քացով խփեցի դռանը:

Պահարանի ալիքաձև դուռը քանդելիս մտածում էի այն պատկերների մասին, որոնց մասին երբեք չեմ խոսել ու որոնք միայն ես եմ տեսել: Դու յոթերորդ հարկի պատուհանից նայում ես. կամ սիրահարված ես, կամ էլ սիրում ես բարձրից նայել: Կին է մոտենում՝ կրծքով կերակրելով երեխային: Նա ծեծելով հեռացնում է քեզ պատուհանից: Մայրդ է: Նորածին քույրդ պլշած աչքերով քո կծկված, պուճուր մարմնին է նայում: Չի լացում: Հիմա մտածում եմ՝ արդյո՞ք հնարավոր էր պահարանի դռան սպիտակ քերծվածքի ասոցիացիան կաթից ուռչած, լքված պտուկի հեռավորությանը հասներ:

Շողերիս դագաղի աջ մասը պատրաստ է:

«Իսկ դու միշտ ես ուշանում քո ժամադրած հանդիպումներից», - Գևորգիս նամակն էր: Առողջացել էր: Ամբողջ քսանչորս ժամ չէինք գրել իրար, «իսկ» շաղկապով տառապանքների, վազվզոցների, շփոթված մտքերի, ժամանակների, դիակների միջից հանեց մի ամբողջ օր, մահվան հետ ապրած մի օր:

Ախր ինչից էի էէէ վախենում....

Չէի գնալու ժամադրության:

Գևորգի հաղորդագրությանն են պատասխանում. «Չեմ իմանում, անընդհատ տանջում եմ քեզ: Գուցե իսկապես չգիտեմ՝ ով ես, էնքան համեստ ես, որ չեմ տեսնում: Գոռալ եմ ուզում, ուզում եմ դուրս գալ, բարձրանալ կտուրներն ու գոռալ: Քո կասկածներից հետո դառը մենակություն եմ զգում: Հոգնել եմ: Դու փորձում էիր մարդկանց տուն ուղարկել: Ինձ էլ էլի ուղարկիր: Ուղարկվելիս կլինեմ ծիծաղելի, ինչպես կտուրներին թառած, բարձր գոռացող աղջիկը»:

Ձախ մասի ալիքաձև տախտակի ետևը ցրտից, խոնավությունից ուռած էր այն ձմեռվա մատներին պես. քեզ ուղարկել են հաց բերելու, կոշիկներդ հագովդ մեծ են, դու երկրորդ դասարանի փոքր աղջիկ ես, սառույցների վրա դժվար ես հավասարակշռությունդ պահում: Հաց չկար հերիք չի, ետդարձի ձամփին էլ ինչքան կոմիսիոն բուդկա կա, մոտոթղ հագիվ հասցնելով՝ ներս ես նայում. փայլուն թղթերը միշտ էլ քեզ դուր են եկել: Բայց մեկ է, էլի ծեծ ես ուտելու. դու չգիտես՝ հայրդ սև, փայլուն գոտին հանելու է, մեջքդ, սուտուզդ դաղելու է իր փող չունենալու, քեզ համար փայլուն թղթով կոնֆետ առնել չկարողանալու համար, ու դու հո եթիմ չես, դեբիլի մեկը, ինչի՞ ես ընկել, խանութների առաջ ժամերով կանգնել, էդպես վիրավորել, նվաստացրել ծնողներիդ: Թե երկու օր առաջ խալխի հարսանիքի հետևից ընկած գնացիր, հասար բոշի թաղերը, ջարդդ



չտվին, առիթավորվեցիր (այս անգամ կարծեմ, սև փոքր հաց էլ կար թևիս տակ): Մառույցների վրա սահելով՝ օդից կիսուրի նետած փայլուն շոկոլադներ բռնելը գայթակղիչ էր... Երկու տարեկան քույրդ էլ, քո վրայով արդեն փոքր, կարմիր շորդ հագին, նստած է գարշոկին, հորդ գոռոցոցներից չի լացում: Էդ օրվանից՝ գարշոկին նստած երեխեքի դեմքին ուշադիր եմ նայում:

Դագաղ պատրաստելուն զուգահեռ արցունքներս էի մաքրում ու մանկության պատկերներ թաղում:

Պետք է չկասկածել:

Երևի Շողերին առանց դագաղի կափարիչի թաղեմ, մեկ է, փորի վրա եմ պատկեցնելու, դժվար չի լինի հողով ծածկելը: Մուրձ, մեխեր, փոքր հատակ, պահարանից դագաղ: Պահարանը բերանի վրա շրջելը, հաստ տախտակը քանդելը դժվար էր:

Պետք է համոզված լինել, թե Շողերը մեռել է, թե հեռուստացույցը բարձր միացրած եմ թողել: Նորից 111-ով Նար-Դոսով իջնում եմ, երթուղայինից էլի տեսա երեխեքիս փոքր սափորները: Վերելակում էլ մտածեցի, թե սրանից նույնպես լավ դագաղ կստացվի, պետք է Շողերի տան զանգը չտայի, բանալի ունեի, հեռուստացույցի բարձր ձայնն էլ էր լսվում, սեղմեցի զանգը:

Շողերը բացեց դուռը:

Շատ ծանր, դժվար էր Շողերին կենդանի

տեսնելը: Նրա կողքին նստելը, նրա հետ հաց ուտելը, Օլյայի մասին պատմելը, գլուխս նրա ուսին դնել, արտասովելը:

Բոլոր ծանր, դժվար բաները տանում են հենց այդ ուրվագծված պատկերը, որը շատ պատկերների պես զեղչված է. աղջիկը, հոր ուսերին նստած, վերադառնում է մանկապարտեզից: Եթե ես այն ժամանակ կարողանայի կռահել հորս ուսերի բեռի ծանրությունը... նրա համար այդ նշանակությունը: Հենց այս թերացմանս մեջ է հորս առաքինությունը՝ ներկայացնել ինձ բացարձակ բան, ինքն իր՝ իմ հեղինակը... ես՝ իր չստացված, անհաջող, կանաչ տետրի բանաստեղծությունները:

**Գուրգեն Խանջյանի**

«Նստիր Ա գնացքը» վեպի Գևորգին

## ՍՐԲԻՉԸ

Գիշերվա երեքին լոգարանի դուռը զգույշ բացեցի, սրբիչն ուսերիս փաթաթած՝ մտա մնջասենյակ: Սովորություն ունեի շորերս թաց մարմնիս վրա հագնելու: Սրբիչը հանելու և մետաքսյա գիշերազգեստս հագնել ցանկանալու ընթացքում հայելու մեջ տեսա մերկ մարմինս ու պարանոցիս վրայի կաթիլները: Ես ու մարմինս այդ անսովոր լռության, խաղաղ սենյակի ու մթան մեջ առաջին անգամ էինք հանդիպում: Դողացող ցուցամատով ձախ ուսիս վրայի կաթիլները հավաքեցի ափիս մեջ: Խաղը դուր եկավ, որովհետև մարմինս շփող մատները օտարի թվացին՝ արվեստագետ տղամարդու: Տարված ինքնաբացահայտումներով՝ թիկունքից հորս հոտն առա ու քարացա:

Միշտ պստիկի հայացքով նրան ժպտալով՝ խույս էի տվել վտանգավորը կռահելու տագնապից:

Առաջին անգամ դա պատահեց իմ մեղքով. բազմոցին կիսապառկած քնած էր: Թաքուն, կատվի պես կամաց, զգույշ գլուխս դրի կրծքին. փոքր ժամանակ հաճախ էր լինում՝ մտնում էի թևի տակ, ինքը մատները մազերիս մեջ խաղալով՝ քնում էինք: Այդ անգամ էլ այդպես բնագդաբար գրկեց գլուխս, մատները մազերիս մեջ՝ քնեցինք: Հաձելի էր: Հետո քնիս մեջ զգացի, որ մարմինս փորիս ու պորտիս մոտ տաքանում է, տեղ-տեղ դողում, զգացի, որ լարվում եմ, մկաններս ձգվում են: Ականջիս բլթակի շոյումից և ձախ կրծքիս վրա ափի հպումից վերջնականապես աչքերս փակ արթնացա, այնպես, որ կոպերիս տակից տեսա նրա ցանկացող հայացքը: Սպասում էի: Զարմանում էի: Խոսում էի ինձ հետ, մտածում՝ տեսնես մորիցս բացի, էլ ով է տեսել հորս այս հայացքը: Երկու ձեռքով մարմնիս բոլոր մասերը շոյում էր: Երբ մի ձեռքը էլ չէի զգում մարմնիս վրա, շարժումներից հասկանում էի, որ իրեն է ձեռք տալիս: «Իմ փոխարեն սիրում է իրեն», - մտքումս կարողանում էի ասել: Թվում էր՝ պիտի բողոքեի, չթողնեի, բայց չէի անում, որովհետև ես երևի պահարանի վրայից նայողն էի, ոչ թե ներքևում կույզ եկածը: Գլուխս կամաց գրկեց, զգույշ պառկեցրեց բազմոցին...

Հետո լսեցի զուգարանի դռան ձայնը: Մտքումս համ սիրում էի նրան, համ չէի սիրում,

հետն էլ լացս գալիս էր: Հետո լսում էի՝ ինձ պատմում էի, թե մորս գնալուց հետո պատահում էր՝ չէի սիրում նրան, իսկ տղամարդուն խղճալը՝ ինձ է թույլ դարձնում: Ասում էր՝ իր աղջկան ամեն բան կարելի է, թույլատրելի: Երբեմն դատարկ բնակարանով արդարացնում էի նրա հաճախակի գրկախառնումները, մազերիս հետ խաղալը, նույնիսկ այն դեպքում, երբ զգում էի, որ պարանոցս տղամարդու պես է համբուրում:

Վերջին անգամ, երբ էլի կոպերս փակ արթնացա, թեև չէի քնել ու նրա ամեն շարժումը՝ սենյակ մտնելը, անկողնուս առջև ծնկելը, մատները դողալով ու դանդաղ վերմակիս տակ մտցնելը, պատին փակցված մորս նկարին նայելը, կամ երագում, կամ իրականում տեսել էի, զգացի նաև, որ անհամարձակ գրկել է ազդրերս, իսկ մյուս ձեռքը չէր հասնում կրծքիս, որովհետև ես մեջքս կորացրել ու փորով գնում էի դեպի պատուհանը, դեպի երկնքի մութը, դեպի հեռուները... Ձայն չէի հանում: Հազվադեպ լսում էի հնոցս: Մարմինս հաճելի խոնավանում էր: Դեռ սպասում էի, դեռ չէի հավատում, որ ի վերջո ներսումս զգալու եմ իմ՝ դեռ սաղմնային ու անօրգանական խոնավությունը: Էլի լսեցի զուգարանի դռան ձայնը:

Երբեմն նրա համար ուտելիք պատրաստելիս մտածում էի՝ գուցե հորս հետ ամուսնացած եմ: Տղամարդու հետ միայնակ ապրելը երազածս

ամուսնությունն էր: Բայց արդեն վախենում էի նրա հետ մենակ մնալ, վախենում էի, որ մի օր կարող եմ զգալ այն խոնավը, ինչից ես ԵՄ: Իմ ներսում ինձ հանդիպելուց էի վախենում:

Հորքուրներիս հետ հորս համար կին գտանք: Երկուսս էլ լուռ ու անտարբեր, այդ կնոջը քծնելով ու շողոքորթելով, հասկացանք, որ նա մեզ պետք է: Նույն օրը, երբ արդեն մեր տանն էինք, դռան ետևից հորքուրներիս՝ մորս հանդեպ արհամարհական վերաբերմունքով խոսելուց հասկացա, որ ես քեռուս երեխեքից մեկն եմ, մայրս չբեր է եղել: Հուսահատությունից ու վիրավորանքից կարկամել էի: Ինձ թվաց՝ երկար փակվեցի լոգարանում, մարմինս ձանկրում էի, այդ պահին ցավը հաձելի էր: Ու ինչքան իմ կողքին զգացել եմ հորս ներկայությունը, այդքան սիրել եմ բոլորին, իսկ այս անգամ նույնիսկ նրա ծիծաղը բթացնում էր զգացողություններս:

Եվ մինչ այն պահը, երբ մերկ մեջքով ու հետույքով սենյակիս մեջտեղում հայրս բռնացրեց, ինձ այնպես եմ պահել, որ չէր հասկացել՝ ես գիտեմ արդյոք, որ իր հարազատ աղջիկը չեմ, գիտեմ արդյոք, որ ինքը գիշերները մահձակալիս առաջ ծնկել, գլուխը վերմակիս տակ՝ համբուրել է մարմինս: Իսկ այդ պահին արդեն քնած ձևանալ չհասցրի: Կես վայրկյանում ամբողջ մարմինս քրտնեց: Միանգամից մտածեցի կողքի սենյակում քնած էլի խորթ մորս մասին: Շրջվեցի:

Մենյակա, մահձակալա, պահարաններս, նրա կինը, նույնիսկ մայրս մերկացած էին առջևս: Էլ չէի ամաչում: Նրա սիրուն աչքերը, իմ՝ ձեռքերս կոնքերիս կողքից իջեցրած մերկ մարմինը շատ անգամներ էի պատկերացրել, ու մթի մեջ տեսածս լույսի տակ նույն տեսքը չուներ: Դիմացս կանգնած մարդն այնպես էր նայում ինձ, իբր առաջին անգամ գլխի ընկավ՝ ինչ բան է կինը: Հավանաբար հասկացավ, որ կին եմ: Իսկ ես կարողանում էի իր միջով դռան ապակիին տեսնել: Իմ մերկությունը նրան թափանցիկ էր դարձրել: Լսեցի, ուզեց ասի, որ այդ հայացքով իրեն նայել են կենակցելուց հետո: Թափանցիկ ստվերը մոտեցավ, սրբիչը վերցրեց, փաթաթեց ուսերիս և արդեն խաղաղ ու քնքուշ գրկեց: Հասկացա՝ ուզեց հոր նման ջերմացնել: Ես չուզեցի: Համբույրները դարձան տղամարդու, շուրթերից կանաչ թելի հոտ էր գալիս:

Առաջին անգամ ընկերոջս հետ չկարողացա զգալ այդ թացի հպումը: Առաջին անգամն անմոռանալի դարձնելու համար խոտերի մեջ մերկ աղջկա նկարով սրբիչ գցեց, ինձ պառկեցրեց վրան: Լարվել էի, բարդույթավորվել: Սրբիչի նկարը խանգարում էր, թվում էր՝ նա ինձանից մերկ է: Համ համբուրվում էի, համ մտածում՝ աչքերս բացեմ ու ընկերոջս ասեմ, որ երկուսով աղջկա վրա պառկել չի կարելի: Վախեցա, երբ աչքերս կիսաբաց անելուն պես տեսա

նրա չոված աչքերը: Այնպես էր նայում նկարին, կարծես աչքերը փակ նրա հետ համբուրվում էր: Էլի կարողացա քայլ առ քայլ հաշվել մտքերս: Այս անգամ մտածում էի՝ տեսնես քանի աղջկա է սիրել այդ նկարին նայելով: Հետո, երբ թեքվեցի, տեսա աղջկա դժգոհ ու չցանկացող, անկիրք հայացքը: Կարծում էի՝ ինքն էլ է առաջին անգամ տարիքից հոգնած պառկել կիսածանոթ ընկերոջ հետ: Մի օր էլ մայրուղով վերադառնալիս տեսա ձամփեզրին փոփրոսացող սրբիչի աղջկա կարմիր սրունքները:

Հիմա մտքում հորս գոռում էի, որ ես երբեք-երբեք մորս պես ետ չեմ նայի, որ ուզում եմ ես իրենից ու ինձանից ծնված աղջիկը լինեմ, երկուսով ունենանք ինձ, փոքր ժամանակվա պես կլողացնենք մեր աղջկան... Իսկ նա հայացքով աղաչում էր՝ չի կարելի... չի կարելի... չի կարելի: Ասում ու խելագարի պես կրծքերս համբուրում էր, ասում ու ողնաշարիս գրում էր. «աղջիկս, չի կարելի...»: Կամաց ու զգույշ վեր կացավ, վերմակը դանդաղ գցեց վրաս, ձեռքերս զգույշ դրեց վրան ու հետո իր ննջասենյակի դռան ձայնը լսեցի:

Նրա գնալուց հետո վերմակը փաթաթեցի վառվող ոտքերիս և ցավեցնելու չափ սեղմեցի՝ հուսահատ ու առանց հաճույքի: Մարմինս տխրությունից խաղաղվեց, թմրեց, ու արդեն կիսաքուն էի, երբ համաչափ-համաչափ ձոձոռ-



ցի ձայնից սթափվեցի: Դրան հաջորդեց հորս գոռոցը. վրեժ հանելու պես գայլի նման ոռնաց: Զգում էի՝ ինձ ինչ-որ բան էր ասում. ցանկացել էր՝ ընդդիմանալի, չթողնեի գնար: Կտրուկ նստեցի անկողնում: Նրանց մահձակալի ձայնն ու հորս ոռնոցը ականջներիս մեջ բազմանում էին: Այդ պահին շատ սիրեցի նրան, ուզեցի գրկեմ, աղջկա, սիրուհու, կնոջ պես: Մատներս մազերիս մեջ խրած, շրթունքներս ատամներիս արանքում՝ այս անգամ ես խանդից ոռնացի:

## Փ Ո Ք Ր Ա Ղ Ջ Ի Կ

Սրտաբանական հիվանդանոցի պատուհանից նայելը տխուր էր. ապակիների վրայի կաթիլի պես կեղտը, բժիշկների սպիտակ խալաթները, հիվանդների անգույն դեմքերը, պատուհանից երևացող տանիքներին թառած ագռավների սև ստվերները:

Աչքերս փակել էի, գլուխս ետ գցել, շուրթերս թեթևակի շարժվում էին: Բժիշկս ասել էր, որ հնարավոր է՝ արնաթքությունը նաև սրտի արատի պատճառով թոքերում առաջացած արյան փսխում լինի: Այդ մասին էի մտածում, երբ կողքիս նստողի սևեռուն հայացքից զգացի արևի դեմ, ամեն ինչի դեմ փակված աչքերիս թրթռացող թարթիչներին նայելը: Բժիշկս էր, ասաց. «Մոված ես: Միասին ընդմիջում կանենք: Հետո կզբոսանենք»: Էլի տեսել էր շրթունքներիս անկյունների չորացած արյան հետքերը:

«Մարդ որ մի քիչ շատ է կարդում, շատ բան է հասկանում, եթե շուրջն էլ մի թեթև միստիկ բան կա, իրեն թվում է՝ ընտրյալ է, բացառիկ»։ Աստիճաններով իջնում էինք, ու նա մարգարեներից էր խոսում, ծաղրելու պես, հեզմանքով։ Ես համոզված էի, որ դա ինձ համար է ասում, որովհետև հասկանում է, որ ես զգում եմ իր մարգարե լինելը, հակառակ դեպքում չեմ հավատա, որ կարող է բուժել։ Սրձարանում բռնեց ձեռքս ու ասաց. «Խելոք աչքեր ունես»։ Ես նայում էի նրա թիկունքում նստած եռյակին. հայրը տաք ու ծանր ձեռքի ափով շոյում էր որդու գլուխը, հորս կարոտեցի, ուզեցի լացել, ամաչեցի։ Հենց այդ պահին ասաց. «Խելոք աչքեր ունես»։ Հայրս պատերազմում էր զոհվել, նրա անունով դպրոց էլ կա։ Բժիշկս նրա նման էր ծիծաղում։ Ասաց. «Սրտի արատով երեխա ունենալու դեպքում ընտանիքում ոչ ոք մեղավոր չէ։ Առողջ ծնողներից ծնված երեխաների մեկ տոկոսն անպայման տառապում է այս կամ այն սրտային հիվանդությամբ»։ Բայց ես մի անգամ եմ միայն մեղադրել ծնողներին, երբ դեռ դպրոցում էի. ուսուցիչս դասը խանգարելու համար ասաց. «Գիտես՝ հիվանդ ես, քեզ ամեն ինչ կարելի է»։ Փոքր էի, բայց հասկացա։ Փախա դպրոցից, տանից... Հայրս ինձ գտավ թաց հողի վրա նստած, գրկեց-տարավ տուն։ Այդ օրն առաջին և միակ անգամ տեսա նրան լացելիս։

«Կուզե՞ս միասին գնանք թափառելու»։ Բժշկիս

ձայնն էր: Իր հարցնելու պահին ես անընդհատ մտածում էի՝ հանկարծ արյուն չգա բերանիցս. զզվում էի բերանիս տաք ու անորոշ, քաղցր համից: Զզվում էի, որ կախվածություն ունեմ սրտիցս: Մեքենայում ինձ անպաշտպան էի զգում: Այդ օրից հետո էլ, երբ մտերմացանք և վերադառնում էինք զբոսանքից, ուզեցինք ձանապարհից դուրս՝ ծիրանենիների տակ նստել, պատահաբար մտանք գերեզմանոցների ձանապարհը, որի երկու կողմում մոխրագույն ծալքով շարվել էին գերեզմանաքարերը: Հետոյի անընդհատ ձանապարհներ շփոթելը, կարծում եմ, կախված էր առաջին շփոթությունից:

«Իրար հետ էինք, երբ տեսանք աղջկա կտրած գլուխը, հայ էր, անունը՝ Նառա: Մարմինն ու գլուխը մի մետր հեռավորությամբ ընկած էին: Ես շատ մոտեցա. կոնքի կորի վրա լրիվ գույները հավաքվել էին՝ մաշկի ձերմակը, խոտերի կանաչն ու արյան կարմիրը: Գեղեցիկ էր ու խեղճ: Լիլիթը լաց չեղավ: Չէ, շատ քաջ է: Այսօր նրա ծննդյան օրն է: Նա միակ կինն է Եռաբլուրի տղերքի կողքին: Երբ խփեցին, ես հեռու էի, ձենը լսեցի»:

Նայեց ինձ, ես գերեզմանաքարին էի նայում ու մտածում՝ բժիշկս խելագար է... մի՞թե հիվանդին բերում են գերեզմանոց: Բայց իր պատմելու ընթացքում ես սկսեցի լրիվ տեսնել՝ աղջկա գոռոցը, տղերքի կիսավախ հայացքները... դրանից

հետո՝ հորս մահվան տարելիցի օրը, մի անգամ էլի էդպես տեսիլք ունեցել եմ... ականջներումս գոչյուններ էին, ու ես նրանց մեջ էի... իմ շուրջի տրամագծի մեջ մարդ, ձայն, ստվեր չկար, բայց ես տեսնում էի, զգում էի նրանց: Ներքևի ձանապարհից մեքենաների շարժիչի ձայներ, հետո դիմացս՝ ծխացող գյուղեր: Իրականում ես բլրի վրայից տեսնում էի նրանց տները... Շատ հետո, երբ նրան գրել էի այդ մասին, ասաց. «Աղջիկս, դու խելոք ես, գրում ես, իսկ գրողը միշտ էլ տեսիլքներ է ունենում, մի վախեցիր դրանից»: Բայց ես գրում էի, որովհետև սարսափելի վախենում էի մահվանից: Գուշակում էլ էի, թե ինչու է ինձ բերել այստեղ. ուզում էր՝ ձեռք տայի շիրմաքարերին:

Շշուկով ասաց. «Պիտի հետ դառնայի, չթողեցին, ես էլ էի վիրավոր, չթողեցին գնամ: Անցանք թիկունք: Չգիտեմ՝ քանի ժամից խաղաղվեց ամեն ինչ: Մարտոյին կանչեցի, ասեցի. «Երբ վարազին կոտում-պրծնում եմ, երբ ձղձղոցը կտրվում է, վարազը, որն արդեն վարազ չի, մոռթը գետնին քսելով՝ գնում-գտնում է ամորձիներն ու ուտում: Պիտի հետ դառնանք, Լիլիթին բերենք, նա չպիտի մնա էնտեղ»: Մարտոյի հետ բերեցինք դին: Նույնիսկ մահացած սիրուն էր: Կանաչ շորերն էլ շատ սազում էին»: Ու ձեռքը շոյելու պես դրեց քարին: «Մարտիկին էլ հաջորդ օրը խփեցին: Էնքան էին կրակել գյոթերը, որ ինչ խոսում

էր, մեջքից էի լսում բառերը»: Գլուխս կախեցի, հայիոյանքից ամաչեցի, հետո մտածեցի՝ տեսնես ինչն է պակասում բժշկիս, որ հայիոյում է, գուցե վաղուց կնոջ հետ չի եղել...

«Մարտիկն ասեց. «Տես ամեն ինչս տեղն է»»: Անպաշտպան ժպտաց ու մեռավ»: Նույն խեղձ ժպիտից նրա դեմքին էլ տեսա: Նայեց աչքերիս ու ասաց. «Ախր շատ փոքր աղջիկ ես»: Ձեռքը դրեց գլխիս: Հենց այդ պահին սիրահարվեցի. ձեռքի հայումի, անպաշտպան ժպիտի, «փոքր աղջիկ» ասելու պատճառով:

Երկուսով Լիլիթի գերեզմանաքարին հենված էինք, երբ սրտիս նոպան բռնեց: Անընդհատ արևին նայելուց հետո շրջեցի հայացքս, աչքերիս մեջ ցուրտ զգացի: Արյունը չէր բավարարում, ձախ կրծքիս տակը ձնվում էր: Հևում էի: Միանգամից ամբողջ մարմնիս քաղցր, կաշուն քրտինք պատեց: Շփոթվեց, վեր կացավ, գրկեց ուսերս, պառկեցրեց իր ոտքին, ասաց. «Թաց բան, թաց բան ինչ գտնեմ, մեքենան հեռու է»: Պայուսակս ցույց տվեցի, ասաց. «Սուս, չխոսես, հանգիստ պառկիր, քեզ խոսել կամ շարժվել չի կարելի, հանեց թաց անձեռոցիկն ու բաց արեց կուրծքս: Շարժումները կտրուկ էին, բայց վարանելն ու ձեռքերի դողը, դրանցից եկող դեղի հոտը զգացի... Հասուն կնոջ նման կրծքերս լիքն էին... Մերկ կրծքիս տակ սպին տեսավ, նրանք ծանոթ էին իրար, ու մատների տաքությունից ջերմացած

Թաց անձեռոցիկը շատ զգույշ, քնքուշ դրեց այնպես, որ շագանակագույնը չծածկի... Երբ հետհետ գնացի ու մեջքով հենվեցի իր փորին, գլուխս կախելիս տեսա նրա՝ թափանցիկ մաշկով, լայնացած երակներով ծեր ձեռքը իմ սպիտակ կրծքի վրա: Սև ու սպիտակի, լույս ու մութի պես էր, բայց այս դեպքում տարբերությունը հասկացա. «փոքր աղջիկ» ասելն էր: Նայում էր: Հարցրի՝ սիրու՞մ է: Ժպտաց: Շրջվեց Լիլիթի կողմը, երևի մտքում ասաց. «Քոնն էլ էր սիրուն»: Երևի չէ, հաստատ ասաց ու ետ-ետ գնաց, հենվեց քարին: Իր փորի ջերմությունից մեջքս քրտնել էր: Համ վատ էի, համ երեք թիկունք էի զգում. իմ, բժշկիս, Լիլիթի, որինը հենված էր անհայտությամբ, դատարկությամբ...

Մենք Լիլիթին էինք հենվել...

Հետո մեքենայի մեջ ասում էր, որ թմրադեղերը շճածություն են առաջացնում, օրգանիզմն իր մշակույթն ունի, թունավոր նյութերը շուտ է ազատում իրենից, և թմրադեղը հաճախամիզության է մղում: Ու դեկին հենվելով՝ շատ լուրջ ինձ բացատրում էր, որ ընդհանրապես բնությունն է այդպիսին, օրինակ՝ ակացիայի ծառը, երբ զգում է, որ իր տերևներն ուտում են կենդանիները, դա հաղորդում է մյուս ձյուղերին, ու սրանք հասցնում են թույն արտադրել... Դատարկության մեջ դեռ խոսում էր, չէի լսում, սպասում էի, գնար միզելու, որ մտածեի... Երբ արթնացա, արդեն լավ էի,

երևի իր տանն էի, նույն հայացքն էի զգում, ինչ հիվանդանոցի աթոռին նստած: Գրկեց ուսերս ու անսպասելի հարցրեց՝ կույս եմ, թե ոչ: Զարմացա, թեև գերեզմանոցում ինձ ցանկանալը զգացել էի: «Քեզ սեռական կյանքով ապրել կարելի է, բայց հոլիանալ՝ չէ»: Մտածում էի՝ հանկարծ էլի արյուն չգա բերանիցս: Նայեց, մոտեցավ, մեղմ համբուրեց շուրթերս, ասաց. «Նա առաջին անգամ ինձ հետ է եղել»: Խոսքը Լիլիթի մասին էր: Անընդհատ Լիլիթին հիշեցնելը ինձ նյարդայնացնում էր: «Երբ թողեցի ընկած և ես վիրավոր էի, ծոցագրպանումս այդ պահի ներսիս գեղարվեստական արձագանքը արագ-արագ շարադրում էի: Նույնիսկ գրել եմ, թե նա ինչ գեղեցիկ էր կանաչ շորերով»: Էլի շատ զգույշ համբուրեց ու ասաց. «Քո մասին էլ եմ պատմվածք գրել, երբ հիվանդանոցում իմ սենյակից դուրս էիր գալիս, տեսա, աչքերդ խոնավ են, ու դու շատ սիրուն ես: Կրծքիդ բարակ սպին էլ էր հրաշալի, ողորկ մաշկի վրա ինքը կծկված և պրկված: Սենյակում անզգա պառկած էիր, պատուհանից լուսնի ստվերն ընկել էր ուղիղ վերքիդ վրա. դու ինձ հրաշալի բաներ տեսցրիր, գրել եմ: Կուզես կարդալ»: Ինձ սարսափելի անպաշտպան էի զգում, լացս գալիս էր: Բերեց, չուզեցի կարդալ: Մեջքով նստած էր, ետևից մոտեցա, գրկեցի մեջքն ու սկսեցի անխնա համբուրել: Այդ պահին ինձ թվաց վրեժ եմ լուծում Լիլիթի մահվան,



չհղիանալուս, իմ քնած ժամանակ իմ մասին պատմվածք գրելու, հետոյի հոգնության, դատարկության և թախիծի համար: Իմ անկանոն, վայրի շարժումներին նա պատասխանում էր, քնքուշ, նուրբ, վախվխելով: Անկողնում ինձ սիրում էր, իսկ ես փորձում էի թաքցնել արցունքներս, բայց ուզում էի աղին խառնվի բերանիս գոլ համին: Հետո, երբ ամեն բան վերջացավ, գլուխս զգույշ վերցրեց իր ուսից, հանգիստ դրեց բարձին: Քնեցի:

Առավոտյան հիվանդանոցից զանգեցին, գնաց: Երբ մտա զուգարան, դույլի կողքին տեսա իր պատմվածքի ձմրթված թղթերը, կռացա, վերցրեցի, ուզեցի կարդալ, թաց էին: Բաց արեցի, տեսա սերմով լի պահպանակը փաթաթել, շարտել է: Դռանը հենված նայում էի կանաչ գուլպաներիս, նա էր հագցրել... այն զգացողությունն ունեի, թե էլի մեջքիս այն դատարկությունն ու հոգնությունն է...

## ԵՐՐՈՐԴԸ

Վերելակն օդի մեջ հաստ պարաններից ձոձվեց, ընդհատ-ընդհատ թափահարվեց, լույսն անջատվեց: Երեք հղի կանայք փորերը երկու ափով գրկեցին, ձչացին: Վերելակ մտնելիս նրանք միմյանց ժպիտով ձանապարհ էին տվել: Խորներքևից ձտձտոց լավեց, հրդեհի լույսը անկյունաձև շողերով դռան անցքերից պատերին շարվեց: Վերելակը կանգնեց:

Երբ մանկական սնունդ և հիգիենայի պարագաներ գովազդող ցուցափեղկին մեջքով կանգնած կինն ընկավ ու ցավից գոռաց, նրա դիմացինը փեղկի ապակու մեջ իր փորի պես կլորացած, շշի գույն ունեցող աչքերը տեսավ, տեսավ նաև, որ ինքն ու ընկնողը նման են իրար: Վերելակի հատակը թրջվեց: Ընկածը ծննդաբերում էր: Անկյունի փոքրամարմին կինը վտանգավոր ու տագնապած շուրջը փնտրեց, լացեց,

հատակի թացի մեջ չոչոռոց լսվեց, նրա վարդագույն շավարը թրջվեց: «Դու էլ ևս ծննդաբերում», - գոռաց ապական աչքերը տեսած կինը, վախեցավ իր ձայնի զիլ արձագանքից ու ավերով խփեց վերելակի դռանը: «Ձէ, նրան օգնիր», - խեղդված ձայնով գոռում էր վարդագույն շավարովը: Միգում էր:

Ապական իր մազերից լսվող ծիծաղը կինը վերագրեց բջջայինի կապ չունենալուն, ոչ թե ընկածին օգնելու իր ցանկությանը: Շոգը ծակծկում էր նրանց դեմքերը: Ծանր հետույքով դժվարությանը նստեց թաց ու տաք հատակին: Պտղաջրերի և մեզի շիթերը փոքր առուններ դարձած՝ դռան արանքից թափվեցին թվացյալ անսահմանության մեջ, իրականում բարձրացող ծխի մեջ կորչում էին կաթիլ-ձայները: «Մոր և մանկան խորհրդատվական կենտրոնի» կազմակերպած սեմինարում ամենից շատ հարցեր տվողն էր: Մի պահ շփոթվեց սև փաթիլներով ծխից, ներքևում ձարձատող կրակից, լացից, տնքոցներից, բայց արագ կողմնորոշվեց ու ընկածի փեշերը ձղձղեց: Ընկածի լացը դագաղի մոտ կանգնած մոր կամ աբորտի մահձակալից իջնող, ներսից դատարկության ու մահվան քրքջոց լսող կնոջ լացի էր նման. դա ջղայնացրեց ապական կնոջը: «Ախր գիտե՛ի՛ նա ինձ չի ներել, ախր երկրորդ աբորտից հետո ռ՛վ է երեխա բերում»: Ասաց ու վերև նայեց: Երբ մեղքի զգացողությունը խեղդում է, այդ պա-

հին վերելակի քառակուսի առաստաղին էլ են նայում, որովհետև վերելակի դատարկությունն էլ է արձագանքում:

Ապակու կինն ուշադիր նայեց նրա աչքերին, տեսավ նրա տառապանքը, որն օդում կախված վերելակի խորությունն ուներ, ու շոյեց գլուխը: Սրահում բոլոր հղիներն էլ նման էին իրար, բռնորն էլ աստվածային գեղեցիկ, բայց այստեղ տեսավ, որ հղիությունը չի ընկածի գեղեցկության պատճառը, այլ այդ խորությունը, քրտինքից թրջված ձակատի մազափունջը և թաց ազդրին մուգ դեղին լուսի ձառագայթը: Երբեք չէր պատկերացրել, որ իր ձեռքերով ձերմակ ու թաց ազդրերից այն կողմի կյանքն է հնայելով կանչելու, հետո սպասելու... Բացված ոտքերը թռչելու պատրաստ թիթեռի պես էին: «Լավ բաների մասին մտածիր ու խորը շնչիր. քթով կշնչես, որ չծարավես», - ասաց ու դժվարությամբ շնչելով՝ հանեց ընկածի ռետուզ-վարտիքը: Նա ուզում էր՝ փնտրեն իրենց:

Ընկածն աչքերը փակեց, հաղթահարեց որովայնը ձնշող, ներքև սեղմող ցավը, մեղմ ժպտաց. «Դաշտում լորի բույն էի գտել, մեջը երեք ձուկար, փորի վրա պառկեցի, ձվերը վերցրի ափիս մեջ, ուզեցի փակեմ ափս, ձգմեմ դրանց սպիտակ պուտերով կեղևը... Լորը եկավ ու ուղիղ կանգնեց դիմացս. ուշադիր նայեցինք իրար. սև հուլունքից աչքերն առանց փախցնելու, տուտուզը շորորաց-

նելով եկավ ու նստեց ափիս մեջ՝ իր ձագերի վրա»։ «Իր ձագերի վրա» բառերն ասելիս ձայնն ու ժպտացող շուրթերը դողացին։

Անկյունի փոքրամարմին կինը վախից կծկված՝ կանգնած էր։ Մարմինը, փորն ու ցցված պորտը անհամաչափ էին։ Դեմքի՝ հավանաբար մանկական ջրծաղիկից մնացած սպիները լույսի թրթռոցից փոսի պես էին դառնում։ Մտքում իրեն համոզում էր, որ անցքերից անընդհատ ոտքերին փչող տաք քամին վերելակի դռներից այն կողմի լռության հետ կապ չունի։ Ախր մայրաքաղաք գալու ձանապարհին՝ մեծ մայրուղու ձախ ու աջ կողմերում, սատանի եղունգի համատարած սևությունը միանգամից, բոլոր բջիջներով զգացել էր, հետո մեքենայի շուրջը կանաչ էր, արևն էլ ապակուց այս կողմ նորից դեմքի սպիները փոսերի պես դարձրեց, այնուամենայնիվ, նրան չէր լքում «սատանի եղունգի» զգացողությունը։ Ամուսինը ձեռքը բռնած չէր նկատել, թեև տանը ինքն էլ էր տեսել, թե իր մայրը ոնց է կենդանի ազոավի որովայնը բացում, սև թևերը բացած մի քանի անգամ մտցնում եռացող ջրի մեջ, հանում ու դնում գլխին. միգրեն էր բուժում... Թոշակի փողերով բակի երեխեքից ազոավ էր առնում։ Ամուսինը նկատել էր մոր հետզհետե կուրանալը, բայց միայն կինն էր տեսել, թե ոնց է սկեսուրը ազոավներն ու թոռնիկի տիկնիկները մեկումեջ փռում լվացքի պարանին, մոտեցնում-հեռացնում, փոր-

ձում էր իմանալ՝ իրեն որքան հեռավորություն է մնացել կյանքը տեսնելու... Մի օր էլ խարխափելով եկել-մտել է սենյակ, քնած հարսի փորին բացված թևերով սև թռչունին պառկացրել, սև կտուցն ուղիղ կրծքերի արանքում թողել-գնացել է: Հիվանդանոցի շենք մտնելիս կինը շուրջը փնտրում էր. հո սև, մեջքը արևից կանաչող թռչուններից մոտերքում չկամ...

Անհեթեթություն էր համարում կնոջն օգնելը. «Ինչ տարբերություն՝ ինչպես կմահանանք, ծնված երեխան հետներս, թե առանց նրա, վերելակը շենքում վերուվար անելով՝ մահն անընդհատ մեզ հետ խաղում է»: «Խաղում է» բառը բարձր ասաց, կանայք կարծեցին՝ խոսքը որովայնում երեխայի խաղի մասին է:

Ինքն առաջինը զգաց վերելակի դռների կիսաբացվելը, երկու կանանց շփոթ-հեղցների ու ոտքերի վրայով ցատկեց, չնկատեց, կոխրձեցկանգնեց ծննդաբերողի ձեռքին ու տեսավ երկու հարկերի հենց մեջտեղում էին՝ ներքևն ու վերևը հավասար, հավասար վտանգավոր: Շոգն ու սև ծուխը փախան դռներով, ազատվեցին վերելակում ձնշող ցավերից, ձայներից: Վերևի հարկում սպիտակ խալաթավորներ էին միջանցքում գրուցում հիվանդների հետ: Երկու անգամ թռչկոտեց՝ երկու անգամն էլ կոխրձեղով ընկածի ձախ ձեռքը: Ափերով խփեց դռների: Ծղրտաց. «Օգնեցեք»: Թիկունքը ծակեց ապակում իր աչքերը

տեսած կնոջ հայացքը, նրանից զզվեց, որ հարցրել էր. «Դու՞ էլ ես ծննդաբերում»: Նայեցին իրար. երկուսի մտքով էլ անցավ՝ ուրեմն բարձրանալիս էլ են միասին եղել...

Գեր բժիշկը տնքտնքալով վազեց դեպի վերելակը, կռացած չկարողացավ օգնել կնոջը, փորի վրա պառկեց, ձեռքերը մեկնեց, հագիվ էր բռնել կնոջ դաստակները, երբ վերելակը աչք թարթելու պես իջավ, տղամարդը հասցրեց միայն գլուխը հետ քաշել, մարմինը սնաց վերևում՝ նրա ոտքերից բռնած օգնողների ձեռքին՝ առանց թևերի: Անկյունի կնոջ ափերն ամուր բռնած՝ կտրված թևերը կախ ընկան, թափահարվեցին, խալաթի թևեր-կտորներն ընկան արյան, մեզի ու պտղաջրերի մեջ. կամ կնոջ վախից էր, կամ ձեռքերի՝ մարմնից անջատվելու անակնկալից...

Ծննդաբերողն ավելի բարձր գոռաց. փորձեց հաղթահարել և ցավը, և հոտը, և կտրված թևերը... Վերելակի թափահարվելով իջնելը և ընկածի ցավից սուր ձիչը միմյանց լրացնելով՝ օգնեցին երեխայի ծնվելուն... Երեխան փոքրացրած ծերուկի էր նման: Երևի դեմքի մանր կնձիռները տաք վերելակում պատահաբար ծնվելու վախից էր... «Ես չգիտեմ նրա սեռը,- գոռաց կինը,- սարքն անընդհատ ցույց էր տալիս, որ երկու թաթիկները ոտքերի արանքում են, ու նա ժպտում է»: «Տղա է»... Օգնող կնոջ մեղմ ժպիտն ու երեխայի լացը նման էին իրար...

լուսինը թփերի մեջ լուսինը թփերի մեջ լուսինը թփերի մեջ

# ՄԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ



## ԵՐԱԶԱՆՔ

Խենթություններս լրիվ հավաքած, կորուստներս առանց հաշվելու և առանց լռելու, սիրահարված հիմարի պես վազում եմ նրա ետևից... Փնթի սիրահարի նման շաղ եմ տալիս զգացմունքներս... Մեծերին չլսելու պատճառով ոտքս քարին է դիպչում, ու քիթմռութի վրա ընկնում եմ... Այդ պահին վիզը ծուռ երազանքս անհետանում է, չքվում, անէանում... պատրաստվում եմ աղուհացով դիմավորել ավելի անձաշակ երազանքի... Յոթ օր սև շոր եմ հագնում... Կորցնում եմ խենթություններ անելու շնորհս... Անձրևը մեղավոր հայացքով արցունքներիս է նայում, ձակատիս քրտինքի կաթիլները երազում եմ անձրև լինել...

Զէ, այստեղ հաստատ ինչ-որ բան այն չէ... Մեկը հեզնախառը ժպիտով ավելացնում է. «Էս ինչ-որ մեկի միակը էստեղ սեր էր փնտրում»:

Ձևական քիթն ու աչքերն է սրբում, իսկ ես հենց երեսին էլ գոռում եմ. «Ամենևին կարիք չկա՝ ստից լացես դեռ չմեռած զգացմունքներիս վրա: Այդ նույն լացով քամին ամեն օր մազերիս մեջ է, անձրևն է ուսերիս»:

Հնոցի ձայնը հիշողությունս կլանում է, ու զգում եմ, որ կորցնում եմ այն: Միակ ապացույցը, որ երբևէ եղել եմ՝ հաղորդագրություններն էին՝ բազմիմաստ, մարդասպան: Այս խենթ վագրի մեջ հասցրի նկատել ընկերուհիների, որոնք վարդերի գլխիկներով կոշիկների փոշիներն էին մաքրում:

Քրտինքի մեջ կորած՝ ետ եմ նայում ու գոռում՝ ինչպե՞ս վերադարձնեմ քեզ, գոռում եմ՝ որտեղ թաքցնեմ քեզ: Քնած շուրթերս երազ են տեսնում՝ իբր աչքերիդ փարված քնել են, իսկ աչքերդ զվարճանում են քրտինքիս կաթիլներով՝ կարծելով թե արցունքներս են... Գոռոցից արթնացած շուրթերս թարս-թարս ինձ են նայում ու երեսիս շարտում՝ լավ կլինե՞ր քեզ հետ այդպես վարվե՞ին:

Ինչ-որ մեկի շուրթերն աչքերս գրկել էին, որ հեկեկոցս չլսվի... Արդեն զգվում էի արցունքներիս համից...

Համառորեն չէի ուզում ուրիշների տողերում քեզ ձանաչել, չէի ուզում, որ քեզ զգուշացնեն, թե՛ զգուշացիր: Հետո չէի ուզում շահագործել Աստծու անունը...

## ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Ես հղի էի, երբ ծնվեցի: Դեռ մորս արգանդում էի, բռնաբարեցին ինձ ու այդ ձիվաղով հղի՝ լույս աշխարհ եկա լուռ ու մեծ մարդկանց հավասար մեղքերով...

Պտղաջրերի փոխարեն կավի մեջ էի խրվել, ականջներս խցանվել էին...

Արդեն երազում էի մենակ ապրելու մասին...

Ծնեցի արնաթաթախ ու ցանկասեր մի ստվեր... Նա ցնցվեց, երբ դարձա ժամանակ ու իր իսկ աչքերի առաջ ժպիտով սկսեցի մերկանալ: Կենդանի-կենդանի ոսկրացած մատներով ձանկոռեցի թիկունքն ու հասկացրի, որ ժամանակն է... ԺԱՄԱՆԱԿԻ: ձիվաղից վրեժ էի լուծում...

Հավերժություն-ժամանակի մեջ կորուստների մեղքեր են հավաքում ու սպիների վրա աղոթքներ քսում...

Ակնթարթ-տարվա մեջ փշրված ապակիների

կտորներ ու մահագույն երազներ են գտնում, իսկ ձռնչացող լուսամուտի փեղկը վայրկյանի ու պատոված վարագույրի հետ երեկ է դառնում, ու էլի ես եմ մնում ԺԱՄԱՆԱԿ...

Ճիվաղիս ամուսնացրի ու հարսանեկան պսակ պատվիրեցի: Շարունակ լիզելով արնաթաթախ շրթունքները՝ տենչում էր բռնաբարել ժամանակի կապտած ստինքները... շրթունքները... Սա էլ իր նախորդի նման խանձարուրը շարտում է գերեզմանափոսի մեջ...

Արևային ժամացույցը գիշեր է լցնում իմ միակ անկյունը, ուր փորի վրա սողացող կրքերը գաղտնի թաղվում են... Մթության մեջ ձեռքերն առաջ պարզած՝ ուրվականները բազմանում են:

Կտավի վրա տարիքը 21-ն է...

Թքած... Ամեն ինչ կսկսեմ նորից...

## Խ Ն Ձ Ո Ր Ե Ն Ի Ն

Ամեն առավոտ սպանում եմ Ադամի կողոսկրից ստեղծած Եվային ու ամեն առավոտ կացնահարում միջիս խնձորենուն... Կացնի հարվածից կտրված ձեռքս անզոր թայրտում է գրասեղանիս՝ բարձիս վրա, իսկ հարսանեկան մատանու քարը վերքոտում է ձեռնափս: Մյուս ափիս մազոտ ձեռքի հպում է, մատների արանքում՝ սիգարետ, որի ծուխը ոչ մի խորհրդավորություն էլ չունի, որովհետև կանայք էլ են ծխում, ու մոխրամանն ընդամենը աղբաման է: Ձեռքս տանում եմ խնձորենու ձյուղին: Դերս եմ փորձում ու էլի սպանում եմ իմ միջի Եվային: Նազանքս ու գեղեցկությունս ջլատված՝ փորձում եմ հասնել ետևիցս, որովհետև մենք միմյանց խոստացել էինք ժպիտով հիշել անցյալը, իսկ դատարկ պահարանն ապտակում է ի պատասխան սպասումի: Ինձ միշտ թվացել էր՝ անվարագույր պատուհաններից այն կողմ մարդ չի երագում ու այդ դատարկության մեջ կադկան-

ձը չի արձագանքվում: Դարձյալ սպանում են իմ մեջ ապրող Եվային: Գնում մի կոճակով վերնաշապիկ, մերկ թափառում իմ սիրած պողոտաներով, ուր ամեն գարնան ծաղկում են խնձորենիները: Չգիտեմ՝ ում դիմեմ գարուն ունենալու խնդրանքով: Ծոմոված ժպիտով շարունակում են գոյությունս քարշ տալ, որովհետև հասկացա՝ դու սովորական մարդ ես: Խորհրդավոր ժպտում են Սատանային, մեղավոր նայում Աստծուն: Դրախտ-խրճիթի դիմաց նստած՝ Եվան փրկության ձանապարհներ էր մտնտում:

Երանի Եվան ինքնասպան լիներ:

## ՎԹԱՐ

Բորբոսնած ժամացույցի սլաքների աղմուկից, շների վնգստոցից, կեսգիշերային լացիցս նյարդայնացած՝ դուրս եմ գալիս փողոց նրան օգնելու, որ փրկի մարմինս: Մթությունից օգտվելով՝ ընպում էր առողջ աչքերս, մատները մտցրել էր բիբերիս մեջ ու ուժով սեղմում էր ետ՝ ավելի խորը՝ գլխիս մեջ... մի աչքս կպավ զավեշտի բջջին. հիշեցի, թե ինչպես իմ ներկայությամբ երկու սիրահարված կին հայիոյում էին իրար իմ համակարգչոտ սիրածի համար...

Հետապնդումներիցս հասկացավ, որ դատարկության ետևում եմ, ուր ոտնահետքեր չկան, բայց ծաղիկները տրորված են... Մինչև ինքս իմ մեջ մտնելն արդեն կարդացել էի Աստվածաշունչը, իսկ ձիուց ընկա շատ տաք գրկի մեջ... Հետո փոքրացա, խեղձացա, երբ հասկացա, որ միայն ցանկալի եմ, ու կիրքն էլ դիմագծեր ունի... Թեև ես էլ եմ երազել մի պահ լինել աղջկա պարանոցին թափված ջրի կաթիլ... Եվ հետո, եկեղեցին

ինչ մեղք ունի, որ իր պատերի տակ կամազուրկ էմ դառնում, որ թույլ էմ տալիս հենց մարիամնե-րի ոտքերի տակ քամել շուրթերս... ու մեծամիտ հույսիս գլուխը շոյելով՝ մնում եմք միայնակ... Այս անգամ էլ ստվերիս մեջ ինչ-որ մեկին էմ փնտրում, ով վերադարձի ժամանակ անպայման կմահանա... Ինձ կարեկցող հայացքները հաս-կացնում էին, որ խելագարվել էմ... իսկ ես ընդա-մենը փողոցից սատկած շանը գրկել, դրել էի մանկասայլակի մեջ, ու վազում էինք մեծ մայրու-ղով, որտեղ կիսամերկ կանգնած կին-պոռնիկնե-րը ոչ մեկին չեն վստահում... Նրանք էլ էին կարծում՝ խելագարվել էմ, բայց ինձ ժպտացին, երբ մանկասայլակի մեջ իրենց ծանոթ դեմք տե-սան... էլի գլուխս կախ, առանց բանաստեղծութ-յան տուն էմ գնում... հետո զգում էմ, որ կոկորդիցս ներքև շղթաս սեղմում է, որովհետև քայլում էմ տանիքից թափվող սառույցների միջով, որովհետև չեմ անցնում գետնանցումնե-րով, որտեղ սովածներն ուտելիք են խժռում, ա-գահները օնանիզվում են զբաղված... որովհետև փողոցում մահն ավելի մոտ է, որովհետև մանկասայլակի ձռձռոց էմ լսում, որովհետև երբեք չէի տեսել, որ գիշերվա մեջ արևը վախից արթնանա, որովհետև գերեզմանոցներում շիր-մաքարերի ողորկ փայլունի վրա ալիքածև արտացոլքս էմ տեսնում ու... որովհետև ինքս էմ տրորված ծաղիկներ դնում հողաթմբերի վրա...



Թեև ոտքերիս տակ երերում է աթոռը...

Իրեն մեքենայի տակ գցող աղջկա վրա վա-  
րորդը բարկանում է, ազդանշան տալիս, ձայնը  
սողալով մտնում է համբուրվող շուրթերի  
արանքն ու գոռում. «...դեմդ նայի»... Կամ, որ  
նույնն է՝ դեմդ նայի, թե ում հետ ես համբուրվում:  
Նույն աղջիկը ծննդյան օրը բալիկի ծնունդ է  
տեսնում... Այդ օրն առաջին ձյունն է գալիս, իսկ  
ինքն իրենց պատշգամբի վրայից պստիկ ավով  
վաղուց էր ձյան կուսության համն առել...

Մյուս աչքս սեղմվեց ոռնոցի բջջին, երբ տողե-  
րիցս ինձ հարազատ շնչառություն զգացի... ա-  
մուսնուն երբեք չդավաձանած կույսի ձիչ լսեցի...  
օդում բռնեցի սաղմի հոտը... քայլերս մարագ  
տարան... ծննդաբերելու...

## ՀՈՄԵՐՅԱՆ ՔՐՔԻՋ

Փողոցում մահվան թափորն է թափառում՝ մոլորված ու թրջված: Ամբոխի գլխին մի դագաղ է պարում՝ ինչպես հարսանիքի ժամանակ սկուտեղներն ու հարսի շորերի զամբյուղը:

Դագաղը դատարկ էր: Դիմացի շենքի պատուհանների վարագույրներից այն կողմ կիսաթափանց ապակիներին լղոզված էին մարդկային դատարկ ու սովորական աչքեր: Հայացքս պաղ լռության մեջ էր: Դագաղի ներսի սպիտակության ու դատարկության նախանձից սուզվեցի փայտե տուփի մեջ ու սաղմի պես տեղավորվեցի... հետո ձեռքերս վեր պարզած, առանց նազանքի պարում էի, բարձր ծիծաղում էի, հռչում: Թափորից ոմանք քթերն էին մաքրում ու հեծկլտում: Բոլորը գիտեին, որ մահացել եմ, իսկ իմ մտքով ինչեր ասես, որ չէին անցնում: Նկատեցին՝ հրաշալի եմ պարում, փայտից բնակարանս իջեցրին գորգապատ սեղանին: Սկսեցի երգել անզուսպ ու սան-

ձարձակ:

Ձէի կարողանում հիշել՝ ինչից եմ մահացել: Գուցե հիվանդ եմ եղել, գուցե մեքենայի տակ եմ ընկել, գուցե ինքնասպան... Հիշողությանս մեջ փնտրում էի, սպանել եմ... Բայց ուլքեր, ինչու՞...

Արագ-արագ սկսեցի ոտքերիս վրա փռված ծաղիկները հավաքել և դրանք ինձ նվիրել՝ որպես չբացահայտված պարգևատրություն, և մարդկանց ուսերին օրորվող անտանիք տնակիցս նետվեցի դուրս, որովհետև գլուխս պտտվում էր ու հնարավոր չէր յոթ պտույտին այլևս դիմանալը... Իջա հողին ու քայլեցի մարդկանց ետևից, սկսեցի հավաքել սպիտակ վարդերի գլխատված կոկոնները: Այդ վարդերից սև ժապավենով պսակ հյուսեցի, վզիս գցեցի, թափորը հասավ գերեզմանոց: Կուրծքս առաջ բերեցի, հպարտ կանգնեցի ամենաբարձր գերեզմանաքարի վրա՝ պատվո հարթակին: Ես շահել էի մրցանակը. լավ ու հաջող մեռել էի: Ծաղիկներից երկու պսակ էլ կողքիս կանգնողների համար հյուսեցի... Հնարավոր է՝ ինձ սպանողներն էին...

## Պ Ա Տ Մ Վ Ա Ծ Ք

*Միշտ դասախոսիս՝ Արթ.Նիկ.-ին՝  
անեծքով ու շնորհակալությամբ*

...ու փողոցում գտա հասցեն կորցրած պատմվածքը: Զարմանալի մանրիկ տառերով ու խնամված ձեռագրով էր գրված: Կարծեցի՝ հեղինակը շատ է տխրել, երբ կորցրել կամ դիտմամբ մոռացել է այն: Գլխատված վերնագրից փշաքաղվեցի ու կրծքիս սեղմեցի, ամուր, քնքշանքով, կարոտած... Ես ու ընկերուհիս էինք... Նրան պատմվածք պետք չէր... Հետս տուն տարա ու թաքցրի բարձիս տակ... Վախենում էի կարդալ, տարօրինակ հուզմունքով սպասում էի... Սովորականից շուտ պառկեցի քնելու ու ձեռքս առա... Զգիտեմ՝ սովորույթ դարձավ, թե՛ անհրաժեշտություն, ամեն օր քնելուց առաջ կարդում էի, այնքան, որ էլ հարկ չէր լինում մաշված թերթերին նայելու... Հետո սկսեցի բարձրաձայն արտասանել, տարբեր

շեշտերով ու տարբեր ձայներով... Պատմվածք գտնելու մոլուցքից ձեռք բերած անքնությունն թուժվեց...

Հետո պատմվածքը սկսեց գիշերներս վերածել մղձավանջի... Աչքերիս մթի մեջ այն նույն անդունդն է, որի մեջ երազում նետված ձիչը դեռ մանկությունից ականջներիս մեջ է, այդ անդունդի եզրին՝ ես ու պատմվածքի օրինական տերն ենք ... Ես վարանում եմ՝ վերադարձնել, թե... Գլուխս կախում՝ ներողություն եմ խնդրում... Ինքն էլ ասում է՝ սահմանախախտությունն օգտակար է ու հետաքրքիր...

Արթնանում եմ սիրտս ձնշող ինչ-որ դատարկության վախից... Ձեռքս բարձիս տակ եմ տանում, խաղաղվում եմ... Ես, որ այդ պատմվածքի հետ կապ չունեմ, ինձ փնտրում եմ լուսանցքում՝ որպես սխալ արարքի հուշում... Պատռելու չափ ջնջում եմ «Չսիրեմ, երախտագիտություն հայտնելու ուրիշ ձև չգիտեմ» տողը: Տողադարձվող բառերն ինձ չեն էլ տեսնում... Հետո ասում եմ, որ կարոտել եմ, հեռու ես, ու կարոտել եմ... Եվ հենց՝ սիրո հավերժությունը կայացման մեջ է...

## ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Հավանելով, անիծելով, շնորհակալությամբ  
(Արքմենիկ Նիկողոսյան).....6

ԵՄ՝ ԷԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....8

### ՏԱՐԻՆ ՄԵԿ

ԼՈՒՍԻՆԸ ԹՓԵՐԻ ՄԵՋ .....14

ՍՐԲԻՉԸ .....28

ՓՈՔՐ ԱՂՋԻԿ .....35

ԵՐՐՈՐԴԸ .....43

### ՍԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ

ԵՐԱՋԱՆՔ .....50

ԱՋԱՏՈՒԹՅՈՒՆ .....52

ԽՆՁՈՐԵՆԻՆ .....54

ՎԹԱՐ .....56

ՀՈՄԵՐՅԱՆ ՔՐՔԻՋ .....59

ՊԱՏՄՎԱԾՔ .....61

**ՎԱՐԴԱՆՅԱՆ ՆԱՌԱ ՇԱՀԵՆԻ**  
**ԿԱՆԱԶ ՏԵՏՐ**  
**պատմվածքներ**

*Խմբագիր՝*

*Գուրգեն Խանջյան*

*Սրբագրիչ՝*

*Հասմիկ Սիմոնյան*

*Շապիկի նկարները՝*

*Անահիտ Հայրապետյանի*

Չափը՝ 60X84, 1/16: Ծավալը՝ 4 տպ. մամուլ:  
Թուղթը եւ տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 500 օրինակ

Տպագրվել է «Վան Արյան» հրատարակչատան տպարանում